



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. երկրորդ եռամսյակում /վերլուծություն/

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 35864 գործարքներ, որոնց քանակը 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 16.7%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 14.3%-ով:

2007թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13865 օտարման գործարքների 86.3% կազմել են առուվաճառքները, 13.0%՝ նվիրատվությունները և 0.7%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 34.1% արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված

անշարժ գույքի 35.5% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2007թ. երկրորդ եռամսյակում, 2007թ. առաջին եռամսյակի համեմատ անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 7.3%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 5.4%-ով:

2007թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.8% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. առաջին եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 16.4%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 3.7%-ով:

2007թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	երկրորդ եռամսյակ 2006թ.	երկրորդ եռամսյակ 2007թ.	առաջին եռամսյակ 2007թ.
Կենտրոն	364200	449400	417700
Արաբկիր	288900	360600	326200
Քանաքեռ-Զեյթուն	174500	261700	232600
Նոր-Նորք	162800	224300	207000
Ավան	144700	209400	192400
Էրեբունի	143100	217300	205600
Շենգավիթ	173300	235500	217500
Դավթաշեն	178400	239900	226200
Աջափնյակ	163000	229500	205500
Մալաթիա-Սեբաստիա	160300	216900	194000
Նուբարաշեն	106100	122300	118000
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>187200</b>	<b>251500</b>	<b>231200</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 8.8%:

2007թ. երկրորդ եռամսյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. երկրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1466 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 2.6%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 9.9%-ով:

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում

առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երկրորդ եռամսյակ 2006թ.	երկրորդ եռամսյակ 2007թ.	առաջին եռամսյակ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	59400	102300	90600
	Ապարան	25600	28600	28300
	Թալին	23000	35700	32700
Արարատ	Արտաշատ	44900	81600	71600
	Մասիս	53500	88700	80600
	Վեդի	37000	57700	53400
	Արարատ	39200	55400	52600
Արմավիր	Վաղարշապատ	77900	123900	112000
	Արմավիր	51300	86600	79600
	Մեծամոր	33300	56500	51400
Գեղարքունիք	Սևան	32500	58500	52500
	Գավառ	24600	33900	31900
	Մարտունի	38300	49400	46500
	Վարդենիս	19800	26200	25200
	Ճամբարակ	13100	14500	14100
Լոռի	Վանաձոր	46700	69300	64000
	Ստեփանավան	24100	33400	31900
	Մայիսակ	32700	44500	42300
	Ալավերդի	20100	24700	23400
	Տաշիր	19900	24000	22500
	Թումանյան	5200	5400	5400
	Շամլուղ	2800	3000	3000
	Ախթալա	10300	11600	11200
Կոտայք	Աբովյան	88500	140100	128700
	Նոր Հաճն	59600	96200	89000
	Բյուրեղավան	42000	70300	62000
	Եղվարդ	55000	86200	80000
	Հրազդան	34400	48300	44900
	Ծաղկաձոր	70800	90200	81900
	Չարենցավան	38600	58800	52800
Շիրակ	Գյումրի	46600	66500	60900
	Արթիկ	29600	43000	40800
	Մարալիկ	21700	24900	24000
Սյունիք	Գորիս	51100	70000	62800
	Կապան	38900	63100	57500
	Միսիան	32200	50600	48800
	Մեղրի	26100	36500	35500
	Ագարակ	19300	23700	23100
	Քաջարան	23800	31000	29700
	Դաստակերտ	6400	6800	6800
Վայոց Ձոր	Վայք	33500	56300	54000
	Եղեգնաձոր	51800	70300	63600
	Զերմուկ	59100	102800	94600
Տավուշ	Դիլիջան	40800	63600	59400
	Իջևան	48700	85900	77700

	Բերդ	29400	33000	33000
	Նոյեմբերյան	15800	27800	26500
	Այրում	18000	18000	18000

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 8.3%:

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1520 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 295, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1225: 2007թ. առաջին եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 5.3%-ով, ընդ որում Երևանում՝ 11.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 3.9%-ով: 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 16.1%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 8.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 24.0%-ով:

2007թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	երկրորդ եռամսյակ 2006թ.	երկրորդ եռամսյակ 2007թ.	առաջին եռամսյակ 2007թ.
Կենտրոն	380300	458800	424300
Արաբկիր	293700	364400	337600
Քանաքեռ-Զեյթուն	177600	264500	237700
Նորք-Մարաշ	184800	227800	210600
Ավան	147400	212700	195500
Էրեբունի	146100	222600	210100
Շենգավիթ	175600	237900	220200
Դավթաշեն	181000	245500	231500
Աջափնյակ	165300	234000	208500
Մալաթիա-Սեբաստիա	163200	219800	196800
Նուբարաշեն	107800	125400	120800
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>193000</b>	<b>255800</b>	<b>235800</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. երկրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 8.5 %:

2007թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն նվազման միտում:

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երկրորդ եռամսյակ 2006թ.	երկրորդ եռամսյակ 2007թ.	առաջին եռամսյակ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	63600	104900	93600
	Ապարան	27100	33100	30700
	Թալին	24300	38800	35000
Արարատ	Արտաշատ	46200	84300	73900
	Մասիս	54600	91800	84600
	Վեդի	38300	61100	56500
Արմավիր	Արարատ	40400	59400	55200
	Վաղարշապատ	79300	126500	114900
Արմավիր	Արմավիր	52900	89900	82200
	Սևան	38200	61100	54800
Գեղարքունիք	Գավառ	25900	37700	34200
	Մարտունի	39500	52700	49300
	Վարդենիս	21500	30000	28500
	Ճամբարակ	14500	17300	16300
	Վանաձոր	48000	74000	67200
Լոռի	Ստեփանավան	26800	37700	35200
	Սպիտակ	33900	48800	45600
	Ալավերդի	21600	28800	26000
	Տաշիր	21400	27000	24700
	Թումանյան	6900	8100	7400
	Շամլուղ	4300	5300	4900
	Ախթալա	11900	14100	13000
Կոտայք	Աբովյան	90000	144300	133200
	Նոր Հաճն	60600	102600	92200
	Բյուրեղավան	43200	72800	64800
	Եղվարդ	56100	90000	84400
	Հրազդան	35900	52400	47700
	Ծաղկաձոր	72200	118100	93500
	Չարենցավան	39500	60700	55400
Շիրակ	Գյումրի	48000	70900	64000
	Արթիկ	30800	45500	43100
	Մարալիկ	23500	27500	26400
Սյունիք	Գորիս	52200	72300	65600
	Կապան	40000	65700	60700
	Սիսիան	33400	55100	51200
	Մեղրի	27300	39700	38100

	Ագարակ	20800	26700	25500
	Դաստակերտ	8700	9600	9100
Վայոց Ձոր	Վայք	34700	59300	57200
	Եղեգնաձոր	53100	72000	66900
	Ջերմուկ	35300	50700	44500
Տավուշ	Դիլիջան	41800	67300	62000
	Իջևան	49900	87400	80700
	Բերդ	30700	36200	35300
	Նոյեմբերյան	16900	30700	28300
	Այրում	19200	19200	19200

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. առաջին եռամսյակի համեմետ աճել են 9.5%:

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն նվազման միտում:

Ընդհանուր առմամբ, 2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 5567 միավոր /3887.03 հա/ հողեր, որից Երևանում՝ 464 միավոր /44.52 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 296 միավոր /108.30 հա/ հողեր, որից Երևանում՝ 145 միավոր /12.43 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2363 միավոր /3470.56 հա/, որից Երևանում՝ 24 միավոր /6.46 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1999 միավոր /178.38 հա/, որից Երևանում՝ 301 միավոր /25.33 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1091 միավոր /122.40 հա/, որից Երևանում՝ 131 միավոր /9.93 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 55 միավոր /56.02 հա/, որից Երևանում՝ 8 միավոր, /2.80 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 56 միավոր /59.37 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 3 միավոր /0.30 հա/ ընդհանուր մակերեսով:

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 5247 միավորի /3750.05 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 423 միավոր /40.66 հա/, նվիրատվության գործարքներ՝ 285 միավորի /129.46 հա/, որից Երևանում՝ 33 միավոր /3.16 հա/ և փոխանակության գործարքներ՝ 35 միավորի /7.52 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /0.70 հա/:

Հանրապետությունում 2007թ. երկրորդ եռամսյակում, 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 12.9%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 4.7%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 20.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 19.1%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1458.21 հա, որից 1434.83 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 39.2% կամ 2058 գործարքներ /1939.65 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 140 գործարքներ /14.01 հա/, իսկ 60.4% կամ 3171 միավորը /1782.26 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 276 միավոր /25.83 հա/: 2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 18 գործարք /28.15 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2007թ. երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	8	2.80	52	5.87	80	5.34	21	5.80	0	0.00	216	16.40	39	3.64
Արագածոտն	174	361.72	1	0.14	8	1.20	51	1.68	190	204.39	0	0.00	148	14.19	15	0.90
Արարատ	113	186.39	11	7.18	123	11.35	90	4.88	271	145.30	1	0.20	246	20.97	17	0.88
Արմավիր	89	641.29	4	0.58	7	0.57	40	0.89	335	793.54	1	0.11	236	21.05	20	0.19
Գեղարքունիք	22	118.08	1	4.68	10	1.08	122	18.91	38	38.81	0	0.00	27	3.59	10	1.45
Լոռի	4	6.28	2	0.08	7	0.99	92	7.36	84	51.10	0	0.00	18	2.76	15	0.51
Կոտայք	239	354.37	7	3.90	73	5.83	178	16.02	389	219.50	3	0.40	487	45.37	44	2.42
Շիրակ	6	3.80	3	32.22	81	2.31	70	2.11	37	43.80	0	0.00	17	1.98	4	0.26
Սյունիք	3	0.34	3	0.31	3	0.20	26	1.88	24	24.09	0	0.00	10	0.84	6	0.04
Վայոց Ձոր	14	46.50	0	0.00	7	0.63	62	1.18	28	23.55	0	0.00	19	1.86	10	35.11
Տավուշ	15	3.40	8	3.23	27	2.29	70	13.96	99	50.53	2	0.18	34	2.81	6	1.21
Ընդամենը	679	1722.17	48	55.12	398	32.32	881	74.21	1516	1600.41	7	0.89	1458	131.82	186	46.61

Ստորև ներկայացվում է 2007թ. երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աձուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	98	8.19	8	2.8	22	0.84	68	4.55	42	5.80	0	0	0	0	30	5.03	12	0.77
Արագածոտն	7	0.10	0	0.00	0	0.00	7	0.10	227	364.65	174	361.72	1	0.14	8	1.20	44	1.59
Արարատ	25	0.65	2	0.35	4	0.09	19	0.21	312	209.15	113	186.39	9	6.83	119	11.26	71	4.67
Արմավիր	14	0.46	0	0.00	2	0.21	12	0.25	119	633.18	82	631.60	4	0.58	5	0.36	28	0.64
Գեղարքունիք	20	2.82	0	0.00	1	0.16	19	2.66	135	139.93	22	118.08	1	4.68	9	0.92	103	16.25
Լոռի	3	0.11	0	0.00	1	0.09	2	0.02	102	14.60	4	6.28	2	0.08	6	0.90	90	7.34
Կոտայք	23	1.98	0	0.00	5	0.22	18	1.76	473	376.16	238	352.39	7	3.90	68	5.61	160	14.26
Շիրակ	27	32.62	2	32.08	6	0.12	19	0.42	133	7.82	6	3.80	1	0.14	75	2.19	51	1.69
Սյունիք	13	1.46	3	0.31	2	0.10	8	1.05	22	1.28	3	0.34	0	0.00	1	0.10	18	0.84
Վայոց Ձոր	6	0.09	0	0.00	0	0.00	6	0.09	77	48.22	14	46.50	0	0.00	7	0.63	56	1.09
Տավուշ	29	1.11	3	0.63	2	0.13	24	0.35	88	19.96	12	1.60	5	2.60	25	2.16	46	13.60
Ընդամենը	265	49.59	18	36.17	45	1.960	202	11.46	1730	1820.75	668	1708.70	30	18.95	353	30.36	679	62.74

Հանրապետությունում 2007թ. երկրորդ եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 11 գործարքներ /13.47 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. երկրորդ եռամսյակում, 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 44.1%-ով: Ընդ որում Երևանում աճել է 3.5 անգամ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 42.2%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 14.4%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 51.7%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 71.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 57.9%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. երկրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	159	304.72	35.3	12381.8	742.1	145	142.08	362.2	6772.5	2583.3
Ապարան						3	6.68	90.6	767.6	358.9
Թալին	15	57.00	34.1	130.0	47.2	33	43.73	90.6	758.5	377.7
Ծաղկաձոր						6	7.67	77.0	948.2	168.2
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	24	33.23	43.8	2273.4	910.1	107	38.82	335.1	5418.0	1398.2
Մասիս	21	33.59	29.9	2400.0	429.2	75	25.87	181.1	6772.5	1784.8
Վեդի	68	119.57	40.0	2296.8	264.3	85	79.26	203.8	4515.0	1199.6
<b>Արմավիրի մարզ</b>										



Արմավիր	15	187.80	21.0	214.1	46.2	69	37.75	294.3	4063.5	878.3
Բարձրավան	38	372.10	22.6	622.1	206.6	90	647.81	90.6	677.3	555.6
Վաղարշապատ	29	71.70	33.8	2464.0	238.7	161	97.26	443.7	9030.0	1506.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						6	2.08	190.2	496.7	363.3
Ճամբարակ	4	14.30	147.7	364.0	249.4	6	12.46	45.3	541.8	146.1
Մարտունի						2	0.31	45.3	1806.0	470.2
Սևան	10	96.44	327.6	386.3	372.6	7	3.56	45.3	451.5	192.1
Վարդենիս	8	7.34	456.7	474.4	462.1	17	20.39	27.2	532.8	242.7
Լոռու մարզ										
Այվերդի						45	20.80	163.0	2483.3	1047.0
Գուգարք						12	16.03	226.4	2709.0	922.6
Սպիտակ	1	0.60	1140.0	1140.0	1140.0	5	0.95	226.4	1490.0	511.9
Ստեփանավան	3	5.68	450.0	500.0	483.3	6	5.92	90.6	2257.5	359.0
Տաշիր						16	7.40	45.3	451.5	201.8
Կոտայքի մարզ										
Աբովյան	107	128.13	38.5	5500.0	554.5	136	46.75	271.7	11287.5	3229.2
Եղվարդ	99	200.08	39.8	2234.6	265.4	216	144.71	172.1	11287.5	2307.5
Հրազդան	32	24.18	73.8	1260.0	214.2	37	28.04	113.2	2709.0	900.8
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	2.14	140.5	160.0	150.3	14	11.20	249.0	1693.1	444.1
Ամասիա						4	10.51	36.2	237.0	112.1
Անի						8	5.91	108.7	361.2	233.5
Աշոցք						5	6.86	45.3	112.9	116.8
Արթիկ	4	1.66	188.6	330.0	259.3	4	3.63	63.4	1083.6	170.8
Սյունիքի մարզ										
Գորիս						9	14.51	90.6	673.3	337.8
Կապան	3	0.34	306.0	4800.0	2553.0	3	2.09	54.3	841.6	223.3
Մեղրի						9	2.06	181.1	1784.2	465.3
Սիսիան						3	5.44	45.3	631.2	223.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	13	46.10	34.4	630.0	317.2	16	13.34	117.7	2524.8	1277.3
Վայք	1	0.40	366.4	366.4	366.4	12	10.21	54.3	1430.7	508.9
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.20	496.1	496.1	496.1	8	2.32	45.3	841.6	351.4
Իջևան	11	1.40	450.0	1860.0	779.8	17	8.34	240.0	1683.2	800.8
Նոյեմբերյան						74	39.88	45.3	3509.5	515.2

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. երկրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0թմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին

Արագածոտնի մարզ										
Աշտարակ	8	12000.0	115.0	116.7	116.3	141	133065.0	113.2	3612.0	2284.7
Ապարան						1	850.0	113.2	632.1	188.2
Թալին						2	2171.0	45.3	361.2	92.3
Ծաղկահովիտ						4	5770.0	45.3	361.2	69.3
Արարատի մարզ										
Արտաշատ	66	65531.0	145.0	626.0	324.7	57	59471.0	135.8	2709.0	884.8
Մասիս	49	46002.0	57.2	994.2	502.6	144	105526.0	135.8	9030.0	1126.3
Վեդի	4	1056.4	900.0	1171.3	1103.5	39	41563.0	113.2	993.3	641.9
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	1250.0	277.2	277.2	277.2	52	48570.0	135.8	2257.5	1064.1
Բաղրամյան						5	6700.0	81.5	270.9	127.4
Վաղարշապատ	4	2320.0	3828.0	3828.0	3828.0	177	154261.0	135.8	4515.0	1421.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						9	9070.0	135.8	903.0	350.5
Ճամբարակ	1	1000.0	90.0	90.0	90.0			45.3	135.5	94.8
Մարտունի	6	6600.0	42.5	66.7	54.5	12	18970.0	90.6	451.5	228.4
Սևան	2	1600.0	187.4	428.5	307.9	2	2000.0	90.6	903.0	141.1
Վարդենիս						4	5862.0	45.3	225.8	103.0
Լոռու մարզ										
Ալավերդի						2	2040.0	67.9	270.9	122.6
Գուգարք	3	7080.0	67.0	2105.4	957.5	11	22816.0	67.9	2347.8	532.0
Սպիտակ	3	1900.0	55.2	294.0	188.0	2	1890.0	63.4	451.5	121.3
Ստեփանավան						2	460.0	45.3	270.9	98.4
Տաշիր								45.3	135.5	68.1
Կոտայքի մարզ										
Արովյան	46	41240.0	430.0	2425.0	1560.4	235	215755.6	135.8	6772.5	1723.5
Եղվարդ	2	1550.0	1690.5	4749.0	3219.8	209	198760.0	135.8	6772.5	1855.0
Հրազդան	20	13305.0	146.0	1549.8	543.9	41	37135.0	135.8	9030.0	1212.4
Շիրակի մարզ										
Ախուրյան	64	17401.2	277.3	23333.3	2345.9	10	9696.5	113.2	1535.1	322.3
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի						1	1035.0	67.9	180.6	94.7
Աջոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	11	4520.0	40.0	735.0	299.2	6	9040.0	67.9	925.6	156.5
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1657.0	67.9	541.8	229.6
Կապան	1	1019.0	475.0	475.0	475.0	5	3005.0	67.9	632.1	199.7
Մեղրի						3	3760.0	67.9	406.4	112.4
Սիսիան								67.9	406.4	132.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	6300.0	75.6	686.3	287.5	15	14339.0	67.9	1128.8	277.9
Վայք						2	2620.0	77.0	632.1	114.7
Տավուշի մարզ										
Բերդ						3	1650.0	45.3	632.1	83.5
Իջևան	25	21603.0	222.0	2200.0	1356.1	26	21484.0	67.9	1354.5	388.7
Նոյեմբերյան						5	4920.0	45.3	632.1	125.4

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 4 գործարքներ 0.18 հա ընդհանուր մակերեսով, ընդ որում 2-ական գործարք Գեղարքունիքի /0.10 հա/ և Լոռվա /0.08 հա/ մարզերում:

2007թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2589 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների

պետական գրանցումների քանակի 7.2%: Ընդ որում, վարձակալության գործարքների 41.9% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. երկրորդ եռամսյակում 2007թ. առաջին եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 13.7%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 11.2%-ով:

2007թ. երկրորդ եռամսյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխության շարժն ունի աճի միտում:

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 211 բնակարանների, 84 անհատական բնակելի տների, 888 հասարակական, 117 արտադրական նշանակության օբյեկտների, 1278 միավոր /7052.07 հա/ հողերի և 11 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 67 վարձակալության գործարքների, այդ թվում 49 միավոր /2.21 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 6.3%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 91.4%-ով:

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 7052.07 հա հողերից 15.66 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 7036.41 հա հողերի 50.85 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 4.12 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 2486.44 հա, որից 2075.05 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 2015.46 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. երկրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i><b>Մարզի անվանումը</b></i>	<i><b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b></i>		<i><b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b></i>	
	<i><b>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</b></i>	<i><b>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</b></i>	<i><b>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</b></i>	<i><b>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</b></i>
Արագածոտն	5	820.00	117	1255.05
Արարատ	1	10.00	51	199.51
Արմավիր	0	0.00	32	64.88
Գեղարքունիք	27	484.48	154	363.96
Լոռի	0	0.00	109	687.22
Կոտայք	1	420.00	38	45.09
Շիրակ	4	30.00	120	866.34
Սյունիք	2	250.98	36	633.97
Վայոց Ձոր	0	0.00	11	233.44
Տավուշ	0	0.00	12	67.15
<i><b>Ընդամենը</b></i>	<i><b>40</b></i>	<i><b>2015.46</b></i>	<i><b>680</b></i>	<i><b>4416.61</b></i>

2007թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6042 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 16.8%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 40.5%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 66.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.0%/, առանձնատների /25.1%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.8%/ և հողերի /12.0%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2483 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 48.1%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 28.8%-ով:

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 2584.53 հա հողեր, որից 21.32 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 85.5% կամ 2209.84 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 1383.31 հա, որից 1382.64 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. երկրորդ եռամսյակում գրավադրման գործարքների քանակական փոփոխության շարժն ունի աճի միտում:

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 23 և 12 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. առաջին եռամսյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 84.2%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 72.2%-ով: 2007թ. երկրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 28.6 %, իսկ ցածրը՝ Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում՝ 2.9-ական%:

2007թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 5966 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 19.4%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 7.2%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /45.5%/:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***